ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

20 հունվարի 2017 թվականի N. 07-Ա

ԸՆԴԵՐՔԻ ՏԵՂԱՄԱՍԻ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ և ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԺԱՄԿԵՏԻ ԵՐԿԱՐԱՁԳՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 55-րդ, 56-րդ և 57-րդ հոդածներով, հիմք ընդունելով՝ <Սաֆարդայ> ՍՊԸ-ի 2016 թվականի հոկտեմբերի 4-ի թիվ 5/10 դիմումը, աշխատանքային փոփոխված նախագծի վերաբերյալ շրջակա միջավայրի վրա ազդեցության և տեխնիկական անվտանգության փորձաքննությունների դրական եզրակացությունները և <Հանրապետական երկրաբանական ֆոնդ> ՊՈԱԿ-ի 2017 թվականի հունվարի 17-ի թիվ Ֆ-07/17 գրությունը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. <<Սաֆարդայ> ՍՊ ընկերության ՀՀ Արագածոտնի մարզի Եղնիկի տուֆի հանքավայրից արդյունահանում կատարելու համար, թիվ ՇԱԹՎ-29/105 թույլտվության մեջ կատարել փոփոխություններ՝

1) թույլտվության գործողության ժամկետը երկարաձգել 50 տարով, սահմանելով մինչև՝ 2066 թվականի հոկտեմբերի 28-ը:

2) ՀՀ Արագածոտնի մարզի Եղնիկի տուֆի 28.10.2004թ-ին տրամադրված 180.0 հազար մ^3 պաշարով հանքավայրի 01.01.2016թ դրությամբ 131170 մ^3 մնացորդային պաշար ունեցող տեղամասն ընդլայնել՝ 1. X=4476128 Y=8411346, 2. X=4476207 Y=8411509, 3. X=4476193 Y=8411521, 4.X=4476036 Y=8411364 <ARM WGS-84> կոորդինատային համակարգով բնութագրվող 102730 մ^3 պաշար ունեցող տեղամասով, ընդհանուրը տրամադրելով՝ 1. X= 4476036 Y=8411364, 2. X=4476308 Y=8411312, 3.X=4476359 Y=8411213, 4.X=4476420 Y=8411339, 5. X=4476193 Y=8411521 <ARM WGS-84> կոորդինատային համակարգով բնութագրվող տեղամասը, տրամադրելով ընդհանուրը 233.9 հազար մ^3 պաշար:

4) հանքի տարեկան արտադրողականությունը սահմանել՝ 4678մ^3 պաշար:

2. *Աշխատակազմի ընդերքի տրամադրման գործակալության պետին՝*

1) 2 օրվա ընթացքում սույն հրամանի 1-ին կետի համաձայն կատարել փոփոխություն ընկերության՝ օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման

թիվ ՊՎ-105 պայմանագրում, լեռնահատկացման ԼՎ-105 ակտում և ծանուցել ընկերությանը հրամանը ստանալուց հետո 10-օրյա ժամկետում՝ պայմանագրի փոփոխությունն իր կողմից վավերացնելու մասին:

2) ընկերության կողմից պայմանագրում կատարված փոփոխությունները վավերացվելուց հետո 10-օրյա ժամկետում ընկերությանը տրամադրել օգտակար հանածոների արդյունահանման թույլտվության, պայմանագրի, լեռնահատկացման ակտի փոփոխված փաստաթղթային տարբերակը.

3) ծանուցել ընկերությանը, որ սահմանված ժամկետներում պայմանագրի փոփոխությունը չվավերացնելու և ընդերքօգտագործման իրավունքի փոփոխությունների փաթեթը չստանալու դեպքում, սույն հրամանը կհամարվի ուժը կորցրած.

4) ապահովել համապատասխան գրառումների կատարումն արդյունահանման իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

3. <<Հանրապետական երկրաբանական ֆոնդ >> ՊՈԱԿ-ի տնօրենին – ապահովել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումների կատարումը՝ ընդերքի տրամադրման գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթի ստացումից եռօրյա ժամկետում:

4. Սույն հրամանը կարող է բողոքարկվել վարչական կարգով կամ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելուց հետո 2-ամսյա ժամկետում:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ